



Հոգեկան առողջության բնագավառում վարքագծի նվազեցնող կամ բացառող սահմանափակող միջոց (1-30-13)

Ո՞րն է վարքագիծը սահմանափակող միջոցը:

Վարքագիծը սահմանափակող միջոցը վերաբերում է սահմանակող միջոցին, որն օգտագործվում է արտակարգ իրավիճակներում, ինչպիսիք են ագրեսիվ կամ բռնության գործադրմամբ վարքագիծ, որը մարմնական վնասվածքի անմիջական, լուրջ վտանգ է ներկայացնում: Սահմանափակող միջոցի կիրառման արդյունքում անձը՝ չափափասը կամ անչափափասը, կորցնում է շարժվելու ազատությունը: Սրա արդյունքում կարող է սահմանափակվել ֆիզիկական ակտիվությունը կամ որևէ մեկի մարմնի սովորական հասանելիությունը:՝ Այն կարող է ներառել ֆիզիկական ուժ կամ ձեռքերի սահմանափակիչներ: Այն կարող է ներառել մեխանիկական սարք, ինչպիսիք են փոկերը կամ կաշվե ձեռնակապեր: Կամ այն կարող է ներառել դեղորայք կամ դեղեր, որոնք հայտնի են որպես քիմիական սահմանափակող միջոցներ:

Կարո՞ղ է վարքագիծը սահմանափակող միջոցը
մարդկային տանջանք կամ տրավմա պատճառել:

Այո: Վարքագիծը սահմանափակող միջոցները տրավմատիկ են և կարող են մարմնական վնասվածք պատճառել տվյալ անհատին, ինչպես նաև

անձնակազմի անդամներին: Այն կարող է մահ պատճառել, նույնիսկ եթե իրականացվել է «ապահով» և ճիշտ կերպով: Այն վախեցնող և նվաստեղնող է և կարող է առաջացնել երկարատև հոգեբանական տրավմա:

Ինչպե՞ս նվազեցնել վարքագիծը սահամնափակող միջոցների կիրառումը:

Վարքագիծը սահամնափակող միջոցի կիրառումը միշտ պետք է լինի վերջին քայլը: Այո, հետազոտությունները ցույց են տալիս, որ այն հաճախ օգտագործվում է, երբ անհատն պարզապես բարձր է խոսում, ընդհատում է խոսքը և չի հետևում ցուցումներին: Այն կարող է հանդիսանալ հաստատության կանոնները կիրառել կամ անհատի վարքագիծը ուղղորդել փորձող օժանդակ անձնակազմի անդամի պայքարի արդյունք, երբ անհատը պարզապես արտահայտում է իր անձնական ընտրությունը: Գոյություն ունեն վարքագիծը սահամնափակող միջոցի կիրառման այլընտրանքներ, ինչպիսիք են վերականգմանն ուղղված ճգնաժամային ծառայություններ, որոնք ավելի շատ կենտրոնանում են անհատների հետ աշխատելու, այլ ոչ թե նրանց վերահսկել փորձելու վրա:

Արդյո՞ք գոյություն ունեն վարքագիծը սահամնափակող միջոցների կիրառումը նվազեցնող օրենքներ:

Այո: Կալիֆորնիայի բոլոր բնակիչներն իրավունք ունեն հոգեկան առողջության հաստատություններում լինել վնասից զերծ՝ ներառյալ չափից շատ սահամնափակող միջոցների ոչ անհրաժեշտ կիրառումը:ⁱⁱ Անձին իր վարքագիծը կառավարելը օգնելու համար պետք է օգտագործվեն պակաս սահամնափակող ճգնաժամի արձագանքման տեխնիկաներ կամ մեթոդներ:

Ե՞րբ կարող է կիրառվել վարքագիծը սահամնափակող միջոցը:

Վարքագիծը սահամնափակող միջոցը կարող է կիրառվել միայն.

1. Արտակարգ իրավիճակներում՝ մարմնական վնասվածքի անմիջական վտանգը կանխելու համար

2. Երբ համեմատաբար պակաս սահմանափակող մոտեցումները ապարդյուն են եղել
3. Անհրաժեշտ ամենակարճ ժամանակով
4. Ամենաքիչ սահմանափակող եղանակով

Ե՞րբ է վարքագիծը սահամնափակող միջոցը պատշաճ չէ:

Սահմանափակող միջոցը երբեք չպետք է կիրառվի որպես «հարկադրանքի, կարգապահության, հարմարավետության կամ պատժի միջոց»:ⁱⁱⁱ Այն չպետք է կիրառվի, եթե առկա են համեմատաբար պակաս սահամնափակող մոտեցումներ, որոնք արդյունավետ կերպով կարող են հանգուցալուծել արտակարգ իրավիճակը: Հաստատությունն ընդունվելուց հետո դրանք պետք է քննարկվեն անհատի և բուժումն իրականացնող թիմի միջև: Սահմանափակող միջոցը երբեք չի կարող կիրառվել որպես չկատարված հրաման (այսինքն գրավոր հրաման, որը տրվել է հնարավոր արտակարգ իրավիճակից առաջ կամ այն ակնկալելիս): Որակավորված մասնագետը (այսինքն բուժող բժիշկը կամ պետության կողմից բուժման հրամաններ տալու լիազորված լիցենզավորված մասնագետ) պետք է դրա կիրառման յուրաքանչյուր անգամ տա նոր հրաման: Սահմանափակող միջոցի հրամանը սահմանափակ տևողություն ունի: Սահմանափակվելուց հետո պետք է կատարվի անձի ժամանակին կատարվող առերես գնահատում: Որոշակի մեթոդները հատկապես վտանգավոր են կամ արգելված են՝ ինչպիսիք են օրինակ՝ երեսով դեպի ներքև սահմանափակումը, երբ անձի ձեռքերը սահմանափակված են նրա ետևում: Նաև գոյություն ունեն սահմանափակված անձին դիտանցելու կամ դիտելու պահանջներ:

Արդյո՞ք անձնակազմը վերապատրաստված է վարքագիծը սահամնափակող միջոցի կիրառումը կանխելու համար:

Ոչ միշտ: Հաստատությունների մեծ մասում, անձնակազմի անդամները վերապատրաստում են անցնում այլընտրանքային միջամտությունների շրջանակներում՝ խուսափելու համար սահամնափակող միջոցի կիրառումից, և, անհրաժեշտության դեպքում, ինչպես պատշաճ կիրառել սահմանափակող միջոցները: Այնուամենայնիվ, բոլոր հոգեկան առողջության հետ կապված իրավիճակներում չէ որ վերապատրաստում է պահանջվում:

Կարո՞ղ է նախապես տրված ուղղորդումը նվազեցնել վնասի վտանգը:

Այո: Հաստատություններից պահանջվում է, որ դրանք քննարկեն անձի նախասիրությունները ընդունվելուց հետո հնարավոր ճգնաժամային իրավիճակը հանգուցալուծելու ժամանակ: Սա ներառում է վաղ ազդանշանների կամ գործարկման ազդանշանների ճանաչումը և ճգնաժամին ամենաարդյունավետ արձագանքը: Պետք է քննարկվեն նախորդ տրավման կամ առողջական վիճակը: Այս գնահատմանը պետք է ներդրում անի որևէ անձ, ում տվյալ անձը ցանկանում է, որ ներկա լինի, ինչպիսիք են, օրինակ՝ ընտանիքի անդամը, նշանակալի այլ անձը կամ դրա լիազորված ներկայացուցիչը՝ առկայության դեպքում:^{iv}

Կարող է միջադեպին հաջորդող քննարկումը նվազեցնել սահմանափակող միջոցի կիրառումը:

Այո: Միջադեպից հետո պետք է տեղի ունենա քննարկում.

1. Խնդիրը լուծելու համար
2. Խնդիրների նույնականացման դեպքում՝ փոփոխություններ կատարելու համար
3. Բացասական մնացորդային ազդեցությունը սահմանափակելու կամ նվազեցնելու համար
4. Ապագա միջադեպերը կանխելու համար

Արդյո՞ք գոյություն ունեն դրական մոտեցումներ, որոնք կարող են նվազեցնել վնասի վտանգը:

Այո: Տեխնիկական աջակցության ազգային կենտրոնը նույնականացրել է սահմանափակող միջոցի կիրառումը նվազեցնող վեց հիմնական ռազմավարություններ.

1. Ղեկավարության տրամադրում դրական փոփոխություն կատարելու համար

2. Սահմանափակող միջոցի կիրառման մասին տվյալների օգտագործում՝ ապագայում կիրառվելիք դեպքերի տեղեկատվությունը ապահովելու համար
3. Անձնակազմի անդամներին վերապատրաստելու համար
4. Սահմանափակող և ճգնաժամը կանխարգելող գործիքների օգտագործման համար
5. Սպառողների ակտիվ հավաքագրման և ներգրավման համար
6. Սահմանափակող միջոցի յուրաքանչյուր կիրառումից հետո բոլոր հարցերի քննարկման համար

Ճգնաժամի կանխարգելումը և վաղ միջամտությունը պետք է լինի թիմային միջոց, որը ներառում է ինտերակտիվ քննարկում անհատի և անձնակազմի անդամների միջև՝ միասին դուք կարող եք վարքագիծը սահմանափակող միջոցի կիրառումից խուսափելու ավելի լավ եղանակներ գտնել:

Արդյո՞ք գոյություն ունի սահմանափակող միջոցի ոչ պատշաճ կիրառման դեմ բողոքարկման ընթացակարգ:

Այո: Լրացուցիչ տեղեկությունների համար կապվեք՝

1. Օկրուզի Յոգեկան առողջության խնդիրներով հիվանդների իրավունքների պաշտպանին(County Mental Health Patients' Rights Advocate)
2. Հանրային առողջապահության լիցենզավորման և հավաստագրման Կալիֆորնիայի վարչություն (California Department of Public Health Licensing & Certification)
3. Օկրուզի իրավաբանների ասոցիացիա(Country Bar Association)
4. Անկարողների իրավունքներ Կալիֆորնիա (Disability Rights California) 1-800-776-5746.

Ցանկանում ենք, որ կապնվեք մեզ հետ: Այս տեղեկատվական թերթիկը կարդալուց հետո խնդրում ենք լրացնել այս կարճ հարցաթերթիկը և տալ ձեր գնահատականը:

Անգլերեն տարբերակ՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form54/index.html>

Իսպաներեն տարբերակ՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form55/index.html>

ⁱⁱՏե՛ս Բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգիրքը § 5325.1(q):

ⁱⁱⁱՏե՛ս 22-րդ Անվանու մը, Կալիֆորնիայի Կանոնակարգերի օրենսգիրք; 9-րդ Անվանու մը, Կալիֆորնիայի Կանոնակարգերի օրենսգիրք, §865.2(ա):

^{iv}Տե՛ս Առողջու թյան և անվտանգու թյան վերաբերյալ Օրենսգիրքը § 1180.4(d); 9-րդ Անվանու մը, Կալիֆորնիայի Կանոնակարգերի օրենսգիրք, §865.4(ա):

^vՏե՛ս Առողջության և անվտանգու թյան վերաբերյալ օրենսգիրքը, § 1180.4(ա):

^{vi}Տե՛ս <http://66.147.244.209/~tashorg/wp-content/uploads/2011/01/National-Technical-Assistance-Center.pdf>

^{vii}Տե՛ս հետևյալ կապը Օկրոկի Յիվանդների իրավունքների հարցերով զբաղվող (County Patients' Rights) գրասենյակների ցուցակի համար .
http://www.disabilityrightsca.org/OPR/pr_directory.pdf

^{viii}Տե՛ս <http://www.cdph.ca.gov/programs/LnC/Pages/LnCContact.aspx>

^{ix}Տե՛ս http://california.lp.findlaw.com/ca03_associations/cabar.html

Կալիֆորնիայի հոգեկան առողջության ծառայությունների մարմինը (California Mental Health Services Authority (CalMHSA)) կազմակերպություն է օկրուզի կառավարությունների, որոնք աշխատում են բարելավել հոգեկան առողջության խնդիրների լուծումը անհատների, ընտանիքների և համայնքների համար: CalMHSA-ի կողմից իրականացվող Կանխարգելման և Կաղ միջամտության ծրագրերը ֆինանսավորում են օկրուզները քվեարկողների կողմից հաստատված Հոգեկան առողջության ծառայությունների մասին օրենքի միջոցով (Դրույթ 63): րդ դրույթը 63 նախատեսում է նախկինում թերի սպասարկված բնակչությանը և Կալիֆորնիայի բազմաբնույթ համայնքներին հոգեկան առողջության ծառայությունների ընդլայնման համար անհրաժեշտ ֆինանսավորումը և շրջանակը:

